ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 14 >> հունվարի 2011թ. N: 1 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Մարդահամարի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի <<Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամար, 2011 թվականին փորձնական մարդահամար անցկացնելու և 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի համապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ ստեղծելու մասին>> N 301-Ն որոշման 5-րդ կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի մոտ 2010 թվականի դեկտեմբերի 28-ին կայացած խորհրդակցության N Մ28/12 արձանագրության 2-րդ կետի <<է>> ենթակետով տրված հանձնարարականի.

Կարգադրում եմ

Ձևավորել Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի կազմակերպման աշխատանքներին աջակցող աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի
2011 թվականի հունվարի
<<14>> -ի N1 կարգադրության

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հարություն Արշակյան – ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, խմբի ղեկավար,

Հարություն Ավետիսյան – ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի տեղակալ, անդամ,

Կառլեն Աբրահամյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, անդամ,

Սահակ Մինասյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, անդամ,

Հակոբ Հարությունյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ,անդամ,

Վազգեն Հարությունյան- ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդական, անդամ,

Վարդան Մալխասյան - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի Շիրակի մարզային գործակալության պետ, անդամ,

Արայիկ Առաքելյան - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրի տարածքային ստորաբաժանման ղեկավար, անդամ,

Կարեն Պետրոսյան - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արթիկ տարածքային ստորաբաժանման ղեկավար, անդամ,

Արմենակ Մարտիրոսյան- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ախուրյան տարածքային ստորաբաժանման ղեկավար, անդամ,

Վարդան Մանուկյան - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Անի տարածքային ստորաբաժանման ղեկավար, անդամ,

Մեխակ Թորոսյան - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աշոցք տարածքային ստորաբաժանման ղեկավար, անդամ,

Վարդան Հարությունյան- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ամասիա տարածքային ստորաբաժանման ղեկավար, անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 17>> հունվար 2011թ. N: 02 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<Գ.ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով , <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժ>>կետի դրույթներով և հիմք ընդունելով Մուշեղ Մուրադյանի 2011 թվականի հունվարի 14-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց >> ՓԲԸ-ի վերստուգող Մուշեղ Մուրադյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն արձակուրդ՝2011 թվականի հունվարի 17-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր՝2011թվականի հունվարի 17-ից մինչև 2011 թվականի փետրվարի 14-ը/ներառյալ/:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 17 >> հունվարի 2011թ. N: 03 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ << ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ >>, << ԻՆՖԵԿՑԻՈՆ - ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ >>,<<ՄԱՐՄԱՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ԱՄԱԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով , <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժ>>կետի դրույթներով և հիմք ընդունելով Ամալյա Հովհաննիսյանի 2011 թվականի հունվարի 13-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա >>,<<Ինֆեկցիոն- հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>,<< Մարմաշենի բժշկական ամբուլատորիա>> ՓԲԸ- ների վերստուգող Ամալյա Հովհաննիսյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն արձակուրդ՝2011 թվականի հունվարի 20-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր՝2011թվականի հունվարի 20-ից մինչև 2011 թվականի փետրվարի 17-ը/ներառյալ/:

Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<17>> **հունվարի 2011թ.** **N:09 ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԹԻՎ 48 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի դրույթներով.
1.Զբաղվածության աջակցության Շիրակի մարզային հանձնաժողովի անհատական կազմից հանել Վահան Դանիելյանին, իսկ Սամվել Ղազարյանի փոխարեն ընդգրկել Հովհաննես Հովհաննիսյանին:
2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2008 թվականի ապրիլի 9-ի <<Զբաղվածության աջակցության Շիրակի մարզային հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> թիվ 48 կարգադրության 1-ին կետում՝
1) հանել <<Վահան Դանիելյան-<<Վորլդ Վիժն Հայաստան>> միջազգային կազմակերպության Գյումրու տարածքային զարգացման ծրագրի ղեկավար /համաձայնությամբ/>>բառերը,
2) <<Սամվել Ղազարյան–մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ>> բառերը փոխարինել <<Հովհաննես Հովհաննիսյան–Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ>> բառերով:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 21 >> 01 2011թ. N: 05 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 236 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում իրականացվող բարեգործական ծրագրերը և մարդասիրական օգնությունների բաշխումը համակարգող հանձնաժողովի անհատական կազմում Սամվել Ղազարյանի փոխարեն ընդգրկել Հովհաննես Հովհաննիսյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի դեկտեմբերի 20-ի <<ՀՀ Շիրակի մարզում իրականացվող բարեգործական ծրագրերը և մարդասիրական օգնությունների բաշխումը համակարգող հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 236 կարգադրության 1-ին կետում <<Սամվել Ղազարյան-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոց. վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ>> բառերը փոխարինել <<Հովհաննես Հովհաննիսյան- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ>> բառերով:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 21 >> 01 2011թ. N: 06 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>>ենթակետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված <<Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի>> 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին 2011թվականի հունվարի 20-ից գործուղել ք. Երևան ՀՀվարչապետի 2010 թվականի դեկտեմբերի 20-ի<<Հայաստանի Հանրապետության 2012 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին>>թիվ 1144-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն ՀՀքաղաքաշինության նախարարությունում մարզի 2012 թվականի բյուջետային գործընթացի քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 2օր՝ 2011թվականի հունվարի 20-ից մինչև հունվարի 21-ը ներառյալ:

Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<27>> 01 2011թ. N: 07 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված <<Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի>> 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին 2011 թվականի հունվարի 31-ից գործուղել ք.Երևան, ՀՀվարչապետի 2010 թվականի դեկտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության 2012 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին>> թիվ 1144-Նորոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն, ՀՀքաղաքաշինության նախարարությունում մարզի 2012թվականի բյուջետային գործընթացի քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 2 օր՝ 2011 թվականի հունվարի 31-ից մինչև 2011թվականի փետրվարի 1-ը ներառյալ:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է